ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108

ք. Երևան 23 ապրիլի 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմեն Գևորգյան Սամվելի» ԱՁ-ն, ի դեմս Ա. Գևորգյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սոցիալապես անապահովներին աջակցելու նպատակով միջոցառումների կազմակերպման ծառայություններ** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Իրականացման և պայմանագրի կատարման ապառողման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4 156 000 (Չորս միլիոն հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը -ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 30 (երեսուն) տոկոսի չափով; Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.19 (զրո ամբողջ տասնիններորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **16** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ ա տ ա ր ո ղ**
Երևանի քաղաքապետարան	**ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ Ա/Ձ**
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ՀՀք.Երևան.Օգանովի փ.15շ.բն.10
Կենտրոնական գանձապետարան	Ամերիա բանկ ՓԲԸ
ՀՀ 900032313372	ՀՀ 1570051776860100
ՀՎՀՀ 02593108	հվհհ - 43119505
Է. Կիրակոսյան _____	Ա. Գևորգյան _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 23 » ապրիլի2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	միավորի գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
1	79951100/5	Գնման առարկա է հանդիսանում <<**Ընտանիքի օրվա**>> կապակցությամբ՝ <<Մեկ համայնք մեկ ընտանիք>> խորագրով զրույց թեյի սեղանի սուրճ, միջոցառման կազմակերպման ծառայության ձեռքբերումը 50 անձի համար՝ վարչական շրջանում գործող սրճարաններից մեկում, որի շրջանակներում կկազմակերպվի վարչական շրջանում հաշվառված բազմազավակ ընտանիքների հանդիպումը Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի հետ: Ներկաներին յուրաքանչյուրին կմատուցվեն սև կամ լուծվող սուրճ կամ թեյ, բնական հյութ, մեկ բաժին թարմ խմորեղեն բիսկվիթային կամ փխրուն շերտերով հիմքով, իրար միացրած սերուցքային կարագով, խտացրած կաթով պատրաստված կրեմով կամ համարժեք այլ քսուքով, սեզոնային թարմ մրգեր: Հանդիպման տեղը և ժամը նախապես համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի հետ:	դրամ	130,000	130,000	1	Արաբկիր վարչական շրջան	II եռամսյակ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օր հետո մինչև 15.05.2020

2	79951100/6	Գնման առարկա է հանդիսանում <<**Բուժաշխատողի օրվա**>> կապակցությամբ միջոցառման կազմակերպման ծառայությունը, որի ժամանակ Արաբկիրում գտնվող տարբեր բուժհիմնարկների մի խումբ լավագույն բուժաշխատողներին՝ մոտ 15 հոգու, վարչական շրջանի ղեկավարի կողմից կմատուցվեն նվեր՝ արծաթե հուշամեդալ 925 հարգի, 10 գրամից ոչ պակաս, պատմական, մշակույթի կամ արվեստի թեմաներով, տուփով, նվերի ստվարաթղթե, թելերով բռնակներով տոպրակով, կհանձնվեն շնորհակալագրեր և ծաղկեփունջ՝ կազմված 11 հատ վարդից, առնվազն 80սմ երկարությամբ ծաղկակոթով, 7սմ երկարությամբ ծաղկապսակով, փաթեթավորված ժապավենով: Նվերի ընտրությունը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի հետ: Առաքումը՝ Ն. Զարյան 27 շենք:	*դրամ*	500,000	500,000	*1*	*Արաբկիր վարչական շրջան*	II եռամսյակ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օր հետո մինչև 19.06.2020
3	79951100/7	**Արաբկիր վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 7-15 տարեկան 50 երեխաների ամառային հանգիստը կազմակերպել** 2 հերթափոխով՝ 08.07.2020թ-30.08.2020թ ժամանակահատվածում՝ Երևանից 100կմ շառավղով հեռավորության վրա գտնվող ճամբարներից մեկում: 1 հերթափոխը 10օր, հերթափոխները իրար հաջորդեն: Երթուղու սկիզբը և ավարտը Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի շենքի մոտ: Ճամբարը պետք է ունենա ճաշարան, երեխաների կացարանը լինի առնվազն երկհարկանի քարե շինություն: Շինության ներսում՝ ննջասենյակների հարկում, տղաների և աղջիկների համար նախատեսված լինի առանձին սանհանգույց և լոգասենյակ՝ ապահովված մշտական տաք և սառը ջրով, նախատեսված յուրաքանչյուր 10 երեխայի համար 1 լվացարան և սանհանգույց, ննջասենյակները լինեն շինության երկրորդ հարկում, տղաների և աղջիկների ննջասենյակները առանձին, մաքուր վիճակում, կյանքի և առողջության համար անվտանգ պայմաններով, կահավորված զգեստապահարաններով, յուրաքանչյուր երեխային տրամադրվի առանձին 1 հարկանի մահճակալ,	*դրամ*	2,200,000	2,200,000	*1*	*Արաբկիր վարչական շրջան*	III եռամսյակ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օր հետո մինչև 08.07.2020-ից-30.08.2020

		երեխաներն ապահովվեն օրական 4-5 անգամյա թարմ, առողջ սննդով, կազմակերպվեն սպորտային և ժամանցի միջոցառումներ: Հերթափոխի ժամկետները համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի հետ: Տրանսպորտային միրոցը տրամադրվում է վարչական շրջանի կողմից:						
4	79951100/8	**Գառնի-Գեղարդ** - Արաբկիր վարչական շրջանի սոցիալական տարբեր խմբերին պատկանող ընտանիքների 50 անձի համար օգոստոս ամսվա ընթացքում կազմակերպել էքսկուրսիա Գառնի-Գեղարդ: Էքսկուրսիան պետք է ուղեկցվի էքսկուրսավարի բացատրությամբ, իսկ վերջում մոտակա հասարակական սննդի օբյեկտներից մեկում նրանց համար կազմակերպել ճաշկերույթ, մատուցելով խոզի, հորթի, գառան մսի խորոված, 2 տեսակի աղցան, պանրի տեսականի, գազավորված սառը ըմպելիք, բնական հյութ, հաց: Էքսկուրսիան կազմակերպելու համար անհրաժեշտ կլինի զբոսաշրջության համար նախատեսված ապահով և հարմարավետ, փափուկ նստատեղերով, օդորակիչով, մաքուր վիճակում գտնվող ավտոբուս: Երթուղու սկիզբը և ավարտը Արաբկիր վարչական շրջանի շենքի մոտ: Էքսկուրսիայի օրը և ժամը նախապես համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի հետ:	*դրամ*	200,000	200,000	*1*	*Արաբկիր վարչական շրջան*	III եռամսյակ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օր հետո մինչև 01.08.2020-ից-30.09.2020
5	79951100/9	**Սեպտեմբերի 21** - ՀՀ անկախության տոնին նվիրված միջոցառում, որի ընթացքում կկազմակերպվի այցելություն ծննդատներ՝ շնորհավորելու 2020թ. սեպտեմբերի 21-ին ծնված Արաբկիրցի նորածինների մայրերին, նրանց ընտանիքներին կնվիրվի ավտոմեքենայի մանկական նստատեղ (car seat): Եվրոպական անվտանգության ստանդարտներին համապատասխան ECE R44/04, 9-36 կգ երեխաների համար, գլխի հատվածի փափուկ ներդիր: Մեջքի հատվածի փափուկ ներդիր: Նստատեղի վերածվելու հնարավորություն, հինգ կետով անվտանգության գոտի: Նվերների քանակը պայմանավորված է նորածինների թվով /առավելագույնը 6	*դրամ*	219,000	219,000	*1*	*Արաբկիր վարչական շրջան*	III եռամսյակ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օր հետո մինչև 21,09,2020

		հատ/: Նվերի ընտրությունը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի հետ: Առաքումը՝ Ն. Զարյան 27շենք:						
6	79951100/10	**Սոցիալական աշխատողի օր** - Տոնի առթիվ Արաբկիր վարչական շրջանի սոցիալական ծառայություն մատուցող տարբեր կառույցների մի խումբ լավագույն աշխատակիցներին շնորհավորել, հանձնել օծանելիքի խանութի նվեր քարտ 30000 դրամի չափով, ծաղկեփունջ և շնորհակալագիր: Միջոցառման կազմակերպման համար նախատեսվում է 9 նվեր քարտ, 9 շնորհակալագիր, 9 ծաղկեփունջ՝ կազմված 11 հատ վարդից, առնվազն 80սմ երկարությամբ ծաղկակոթով, 7սմ երկարությամբ ծաղկապսակով, փաթեթավորված ժապավենով:	*դրամ*	317,000	317,000	*1*	*Արաբկիր վարչական շրջան*	IV եռամսյակ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օր հետո մինչև 04,11,2020
7	79951100/11	**Այցելություն Ռոբերտ Աբաջյանի ընտանիքին** - Քառօրյա պատերազմում զոհված Ռոբերտ Աբաջյանի ծննդյան օրը՝ նոյեմբերի 16-ին, կազմակերպել այցելություն նրա ընտանիքին: Այցի համար Երևանի <<Արարատ>> գինու-կոնյակի գործարանի 20 տարվա հնեցման կոնյակ, առնվազն 0,5լ ծավալով, գործարանային շշալցմամբ և տուփով կամ դրա համարժեքը, բարձրորակ շոկալադներ՝ 250-350 գր զուտ քաշով, բելգիական, գերմանական կամ իտալական արտադրության՝ ստվարաթղթե, պլաստիկ կամ մետաղական տուփով կամ դրանց համարժեքը: Կոնյակը և շոկոլադը նվերի ստվարաթղթե, գունավոր նկարազարդումներով, բռնակներով տոպրակի մեջ տեղադրված, 11 վարդից կազմված ծաղկեփունջ՝ առնվազն 80սմ երկարությամբ ծաղկակոթով, 7սմ երկարությամբ ծաղկապսակով, փաթեթավորված ժապավենով: Նվերի ընտրությունը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի հետ: Առաքումը՝ Ն. Զարյան 27 շենք:	*դրամ*	54,000	54,000	*1*	*Արաբկիր վարչական շրջան*	IV եռամսյակ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օր հետո մինչև 16,11,2020

79951100/12	**Հաշմանդամների միջազգային օր**: Միջոցառման ընթացքում Արաբկիր վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանում /Կոմիտասի 49 շենք/ պետք է կազմակերպվի տոնական ճաշկերույթ ճաշարանի շուրջ 100 շահառուների համար, որտեղ կմատուցվեն մսով 2 տեսակ տաք ուտեստ, թարմ և որակյալ նախուտեստներ՝պանրի և երիշկեղենի տեսականի, սև և կանաչ ձիթապտուղ, թթու դրած բանջարեղեն, 2 տեսակ աղցան, կիսաքաղցր գինի, գազավորված ըմպելիքներ և ջրեր, մրգեր /խնձոր, նարինջ, մանդարին, բանան և այլն/, թարմ խմորեղեն: Ճաշկերույթը պետք է ուղեկցվի ուրախ երաժշտությամբ:	*դրամ*	242,000	242,000	*1*	*Արաբկիր վարչական շրջան*	IV եռամսյակ Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օր հետո մինչև 03,12,2020
79951100/13	**Այցելություն Հայկ Թորոյանի ընտանիքին** - Քառօրյա պատերազմում զոհված Հայկ Թորոյանի ծննդյան օրը՝ դեկտեմբերի 11-ին, կազմակերպել այցելություն նրա ընտանիքին: Այցի համար Երևանի <<Արարատ>> գինու-կոնյակի գործարանի 20 տարվա հնեցման կոնյակ, առնվազն 0,5լ ծավալով, գործարանային շշալցմամբ և տուփով կամ դրա համարժեքը, բարձրորակ շոկալադներ՝ 250-350գր զուտ քաշով, բելգիական, գերմանական կամ իտալական արտադրության՝ ստվարաթղթե, պլաստիկ կամ մետաղական տուփովկամ դրանց համարժեքը: Կոնյակը և շոկոլադը նվերի ստվարաթղթե, գունավոր նկարազարդումներով, բռնակներով տոպրակի մեջ տեղադրված, 11 վարդից կազմված ծաղկեփունջ՝ առնվազն 80սմ երկարությամբ ծաղկակոթով, 7սմ երկարությամբ ծաղկապսակով, փաթեթավորված ժապավենով: Նվերի ընտրությունը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի հետ: Առաքումը՝ Ն. Զարյան 27 շենք:	*դրամ*	54,000	54,000	*1*	*Արաբկիր վարչական շրջան*	IV եռամսյակ Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օր հետո մինչև 11,12,2020

0	79951100/14	**Ամանորի ճաշկերույթ - Ամանորի և Սուրբ ծննդյան** տոների առթիվ Արաբկիր վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանում /Կոմիտասի 49 շենք/ պետք է կազմակերպվի տոնական ճաշկերույթ ճաշարանի շուրջ 100 շահառուների համար, որտեղ կմատուցվեն մսով 2 տեսակ տաք ուտեստ, թարմ և որակյալ նախուտեստներ՝պանրի և երիշկեղենի տեսականի, սև և կանաչ ձիթապտուղ, թթու դրած բանջարեղեն, 2 տեսակ աղցան, կիսաքաղցր գինի, գազավորված ըմպելիքներ և ջրեր, մրգեր /խնձոր, նարինջ, մանդարին, բանան/, թարմ խմորեղեն: Ճաշկերույթը պետք է ուղեկցվի ուրախ երաժշտությամբ:	*դրամ*	240,000	240,000	*1*	*Արաբկիր վարչական շրջան*	IV եռ[redacted]ամսյակ պայմա[redacted] նագիրը ուժի[redacted] մեջ մտնելու օրվա[redacted]ից 20 օրացո[redacted]ույցային օր հետ[redacted]ո մինչև 25,12[redacted],2020

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313372
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ Ա/Ձ
ՀՀք.Երևան.Օգանովի փ.15շ.բն.10
Ամերիա բանկ ՓԲԸ
ՀՀ 1570051776860100
հվհհ - 43119505

Ա. Գևորգյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 23 » ապրիլի2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ԸՆԴԱՄԵՆԸ
1-10	*սոցիալապես անապահովներին աջակցելու նպատակով միջոցառումների կազմակերպման ծառայություններ*	...	...	...	...	130000	630000	2830000	3030000	3249000	3249000	3620000	4156000	**4 156 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313372
ՀԿՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ Ա/Ձ
ՀՀք.Երևան.Օգանովի փ.15շ.բն.10
Ամերիա բանկ ՓԲԸ
ՀՀ 15700517768660100
հվհհ 43119505

Ա. Գևորգյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » ապրիլի2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » ապրիլի2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4.1
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով
գնանշման հարցմանի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան **23 ապրիլ 2020 թ.**

«Արմեն Գևորգյան Սամվելի» Ա/Ձ»-ի, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Գևորգյան ի նույնականացման քարտ 010617660 տրված 13.09.2018թ-ին 001-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված **ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108** * ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Արմեն Գեվորգյան Սամվելի ԱՁ
ՀՀ ք. Երևան. Օգանովի փ. 15շ. բն. 10
Ամերիա բանկ ՓԲԸ հհ - 1570051776860100
հվհհ - 43119505

Արմեն Գեվորգյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

23 ապրիլ 2020 թ.

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **Արմեն Գևորգյան Սամվելի Ա/Ձ**	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Ամերիա բանկ ՓԲԸ**	
6. Վճարողի հաշվի համարը՝ **1570051776860100**	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ **43119505**	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **4 156 000 (Չորս միլիոն հարյուր հիսունվեց հազար)**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ **ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108** ***պայմանագրի (որակավորման ապահովման համար)***	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ե. Ալմազյան /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Հավելված 5.1
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով
գնանշման հարցմանի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան

23 **ապրիլ 2020 թ.**

«Արմեն Գևորգյան Սամվելի» Ա/Ձ»-ի, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Գևորգյան ի նույնականացման քարտ 010617660 տրված 13.09.2018թ-ին 001-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված **ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108*** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2.Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Արմեն Գեվորգյան Սամվելի ԱՁ
ՀՀ ք. Երևան. Օգանովի փ. 15շ. բն. 10
Ամերիա բանկ ՓԲԸ հհ - 1570051776860100
հվհհ - 43119505

Արմեն Գեվորգյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

23 ապրիլ 2020 թ.

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **Արմեն Գևորգյան Սամվելի Ա/Ձ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Ամերիա բանկ ՓԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **1570051776860100**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **43119505**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **415 600 (Չորս հարյուր տասնհինգ հազար վեց հարյուր)**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ AMD**

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ **ԵՔ-ԳՀԾՁԲ-20/108** ***պայմանագրի (կատարման ապահովման համար)***

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ե. Ալմազյան /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.